

ենք նրան լուսոյ մասնակից արել և զարկ տուել նրա դիտակցութեանը: Երբ մենք այդ շաւղով կընթանանք և այդպէս կը գործենք, երբ այդպիսի հաշիւ ներկայացնելու համար կը հաւաքուենք այդ սրբազան գերեզմանի շուրջը, նոր միայն աւելի արժանաւոր կերպով կատարած կլինենք մեր պարտքը և արժանաւոր ու անզուգական սրբոց խնկելի յիշատակը:

Ե. Տ. Վ. Մ.

Ամսոյս 25-ին աղգին Վեհափառ Հայրապետը բարեհաճեց օգափոխութեան համար փոքրիկ ճանապարհորդութիւն կատարել դէպի Գօշ (Կուաշ աւան Արշակունեաց) և այնտեղից Թալիշ (Արուճ աւան Մամիկոնեան նախարարներին): Գօշ գիւղը գտնուում է Արագած կողերին, ունի գեղեցիկ բնակականութիւն, պատուական աղբիւրներ, մեծ և նշանաւոր առու Համբերթի գետակից, վերջրած՝ դիւղի մօտ մի շարք գեղեցիկ ջրվէժներով, որոնք հսկայական ոյժ են կազմում և կարող են գիւղին ահաւորին օգուտ բերել: Գիւղից բացւում է հրաշալի տեսարան դէպի Մասիսն և Արաքսի հովիտը, որի ծայրը կորչում է արևելքում: Գիւղում կան բազմաթիւ հնութիւններ և խաչքարեր: Աւանի հին վանքի տեղն այժմ գտնւում է գիւղի նորակառոյց եկեղեցին, որտեղ ս. Գէորգայ գերեզմանն է և նշանաւոր ուխտատեղի: Գիւղի հիւսիս արևմտեան կողմում գտնուում է Իւանէ Արղութեանի օրով շինուած փոքրիկ եկեղեցու աւերակներ վրացերէն արձանագրութեամբ և բազմաթիւ այրեր, որտեղ մեծ բազմութիւն է ապրել գուցէ դեռ նախապատմական ժամանակներում: Այրերի մէջ կան կարասներ, կրաշէն հորեր՝ երևի ցորեն և այլ պաշարեղէն պահելու:

Աղաւնատուն կոչուած գիւղում ծերունազարդ Հայրապետը փոքր ինչ հանգստանալուց յետոյ՝ մեկնեց դէպի

Գօշ, որտեղ անցկացրեց չաբաթ երեկոն և կիւրակէն, ներկայ եղաւ կիւրակէ օրուայ պատարագին, երեկոյեան դէմկանչեց ժողովրդին իրեն մօտ. մխիթարեց նրանց, յորդորեց սիրով լինել իրենց դասցիւների հետ, կռուի ու տարածայնութեան տեղիք չը տալ. մաքուր պահել սերմն ու վաստակը անարգար ազահութեամբ ձեռք բերածից և ուսում սիրել. հաւասար իրաւատէր և խնամքի առարկայ դարձնել իրենց կանանց՝ մայրերին, որոնք բացի դաւակ բերելու և մեծացնելու ծանր աշխատանքից, հաւասարաշափ բաժանում են տղամարդոց դաշտային և տնային աշխատանքները: Ժողովուրդը ոգևորուած ցոյցեր արեց Վեհափառ Հայրապետին, ջերմ համբուրեց նրա աջը և ուրախ ու գոհ սրտով ցրուեց դէպ իւր տները:

Հետեւեալ առաւօտ Վեհափառը մեկնեց դէպի Թալիշ գիւղը. (Արուճաւան), որը յայտնի է եօթներորդ դարու սկզբում Գրիգոր Մամիկոնեանի շինած հոյակապ և հըսկայական մեծութիւն ունեցող տաճարով, որ թէև վնասուած, բայց և այնպէս մեծ տպաւորութիւն է թողնում այցելուի վրայ: Այստեղ կան բազմաթիւ հնութիւններ, ամրոց, Մամիկոնեան պալատի աւերակներ, ուրիշ հազարաւոր շինութիւնների մնացորդներ և ընդարձակ գերեզմանատուն: Հնութիւնները դիտելուց և մի քանի ժամ հանգստանալուց յետոյ՝ Վեհափառ Հայրապետն այցելեց գիւղական եկեղեցին, ընդունեց ժողովրդին հին տաճարում, խրատեց և մխիթարեց նրանց և ահագին բազմութեան ոգևորուած ցոյցերով ճանապարհ ընկաւ դէպի Խզնաւուղ. գիշերեց Գրամիի գիւղում և երեքշաբթի առաւօտեան ժամանեց ս. Էջմիածին: Ծանապարհորդութեան ժամանակ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին եղիշէ ծ. վարդապետ Մուրադեանը, Կորիւն վարդապետ Սահակեանը, ճեմարանի տեսչի օգնական պ. Մկրտիչ Ղազարեանը, պ. Խորէն Խրիմեանը և Էջմիածնայ դաւառի գործակալը:

Մայր Աթոռից իրենց պաշտօնատեղին վերադարձան Սանահնոյ վանահայր Գարեգին եպիսկոպոս Սաթունեանը, Կարսի փոխանորդ Կիւրեղ վարդապետը, Տաթևի փոխանորդ Ներսէս վարդապետը և Բետարաքիոյ Կանսիստորիայի նախանգամ Յուսիկ վարդապետը:

Վեհափառ Հայրապետի հրաժանաւ Մայր Աթոռ վերադարձաւ Բաբգէն վարդապետը և նշանակուեց անդամ տպարանական վարչութեան:

Յուլիսի 6-ին Հայրապետական կոնգակով վանական կառավարութեան անդամ նշանակուեցին Եղիշէ ծ. վարդապետ Մուրադեանը, Բաբգէն վարդապետ Աղաւելեանը և Զաւէն վարդապետ Մ. Բաբայեանը: Վերջինս նշանակուեց նաև հիւրընկալ Մայր Աթոռոյ:

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ

«С. Петерб. Вѣдомости» թերթն հաղորդում է հետևեալը. Մի արժանահաւատ անձնաւորութիւն գրում է մեզ, որ Պետրօպաւլովսկ զրահակիր նաւի հետ ծովի յատակն ընկղմած Սուրբ Նիկողայոսի պատկերը ծովի երեսն է բարձրացել և ուր այդ պատկերը գտել են և ուղարկել Պետերբուրգ:

«Цѣрк. Вѣстникъ» թերթն հաղորդում է, որ Սամարայի թեմում առաջնորդի թոյլաւութեամբ և հոգևորականութեան նախաձեռնութեամբ կազմուում է և ծրագրւում հովուական համաժողովներ: Սամարայի դաւառի վեցերորդ շրջանի հոգևո-